անանխանձարար կառատաձեռնէ, սպառազինեալ կղիմեն այն հէգ և թշուառի լրտեսեալ բնակարանն, ուրանօր իւրեանց կարողութեան ներողութեանն չափ կողոպուտն առնլով՝ և արտաքուստ աւարեալ տան դուռն ամրափակելով՝ իւրեանց օթեւանն կվերադառնան, թէպէտ տանուտէրն կիմանայ գողոց մուտքն, բայց դժբաղդաբար լուութեան կդատապարտուի, կրկին պատճառաւ, մի՝ զի իւր կենաց վտանգն ի ներքուստ կյաղթէր ընչից քաղցրութեան, երկրորդ՝ զի գողոց զօրութեանն դիմադրելու անզօր էր։ Վերջապէս գործողութիւնն այս արարքով անցնելէն զկնի, գիշերոյն՝ ողջունիւ ցերեկէն մեկնելուն կետին վերայ զրացւոյն այցելութեամբ փակեալ դռներն կբացուին, և տանուտէրը երկիւղի կապանքից ազատվելով՝ յուսահատ սրտիւ կներկայանայ քաղ. Ատենին ի յայտնութիւն ամենայն եղելութեանցն, այսպէս ասելով, Տէր դատաւոր, գողոց անիրաւութիւնը զրկելով զիս յարդար վաստակներէս՝ աղքատութեան դատապարտեց, եթէ ատենիս արդարութիւն յօգնութիւն ինձ ոչ փութասցէ, և կարող էք զիւրաւ յաջողել. Տէր Դատաւոր, քանզի անցից կերպարանքը յայտնապէս ցոյց կտան զգողն, ըստ որում՝ մին շար և խորամանկ պառաւ երեկ երրորդ ժամուն ծպտեալ ընդ կերպարանս աղբատի մեր տունն այցելեց, ամենայն մտից և ելից տեղեկանալով, որոյ յայսկոյս յայնկոյս ստէպ հայեցուածքը ոչ գողութեան նախընթաց պարագայ, այլ յոյժ կարօտութեան ապացոյց դատելով և առ երեւոյթին աղքատ վիճակին՝ անդիտաբար խղճալով՝ ազատ ողորմութեան տրօք շահեց ինքզինքն. և ահա ժամանակն կրկին գիշեր չտեսած, այս գժբաղդութիւնն մեզ պատահեց։

Ցնծութիւն, ցնծութիւն, քանզի մինչդեռ ընչազուրկին բերանն նահանգական կառավարչին ունկան հետ գողութեան հանգամանաց վերայ վաճառականութիւն կանէին, ճշմարտութիւնն փառաւոր յաղթանակաւ զոնէն ներս կմտանէ, քանզի նոր գուժարեր կներկայանայ նոյն գողութեան լրտես պառաւի մահուան վրէժն խնդրելու. թողնենք Ատեանն իւր դատողութեան և քննութեանն, մենք անցնենք պառաւի սպանութեան գործին և պատճառին, որ որոգայթ է գողոց յայտնութեանն և նոցա դատապարտութեանցն. ըստ որում՝ այն գողերն երբ իրաց եղելութեան վիճակին կտեղեկանան լրտեսաց միջոցներով՝ կենաց կորստեան երկիւղն անմիջապէս կթագաւորէ իւրեանց սրտումն, զի լաւ գիտէին, եթէ այն պառաւի տկար և կանացի բնութիւնն՝ տկար և անդիմադիր է սատկութեան սպառնալեացն, որով անշուշտ պիտի իւրեանց գողութիւնն յերևանս հանէ։ Ո՞վ գողոց յիմարական նախատեսութեան. այն թշուառ պառաւն վարձատրելոյ պատրանքով իւրեանց մօտ կոչելով՝ նորա կեանքն սրով կկընքեն, որոյ մարմինն գողոնից հետ կպահեն. որպէս զի նորա հետ ևս ծածկուի իւրեանց գողութիւնն. բայց ի՞նչ, թէպէտ հեռատեսութիւն և կենաց ազատութիւն էին կարծում, բայց ո՛չ, այս անխորհուրդ գործն իւրեանց պատժապարտութեան պատճառաւ պիտի լինի, ըստ որում՝ այն չարաձիգ պառաւի ընտանիքն ծածկաբար դիմելով կբողոքեն առ դատաւորն գժբաղդ գողոց արարողութեան համար, ինչպէս վերը յիշեցինք, և նորանց անուններն և տեղն կյայտնեն նորան. գժբաղդութիւն գժբաղդութեանց վերայ և դատապարտութիւն իշխան նոցին. քանզի ոստիկանութիւնն զինուորացն զնոսա յատեանս ածել հրամայեց. և յորոց ամբողջապէս այն գողոնքն ստանալէն և արդարապէս կշռադատելէն ետքը՝ անգութ դահճաց ձեռքն կը յանձնէ զվերջապատսն, որոց զվնասուորի կեանքն փոխանակ զվնասն պառաւին, որոյ սպանիչն իսկ ինքն եղած էր, կնքել կհրամայէ՝ զգլուխն ի բաց բառնալով ի մարմնոյն, իսկ մնացեալոց աջ ձեռքն հատանել։ Դատաստանը այս կերպ վախճան առնելէն ետքը՝ ուշադրութիւնդ դարձո՛ միւս միաձեռների վերայ, ո՛վ ծիծաղաշարժ կամ տրտմարիթ, չգիտեմ՝, ո՞ր ածականն է յարմար տեսարանիս, որում՝ ականատես իսկ լինելով՝ կամիմ յայտնել, Ցարգոյ խմբագիր, վասն զի պատժապարտեալքն կտրած աջ ձեռքերն ձախովն բռնելով՝ վիրաբուժի տունն կփութային կեանքերն փրկելու դիտաւորութեամբ, քանզի արիւնն անընդհատաբար կհոսէր, զանձինս ներկանելով. վերջապէս վիրաբուժութեան արուեստին հմտութեամբ հատեալ ձեռաց արիւնն դադարեցաւ, ուր փրկչին և բարերարին երախտագիտութիւն մատուցանելոյ փոխանակ՝ ապերախտութիւն կհատուցանեն նորան, ըստ որում՝ դուրս գալու ժամանակն նորանցից մին՝ բարերարի կոշիկներն ձախ ձեռքով գողացած իւրեանց նորան վճարած վարձուց փոխարէն, կմեկնին։

Ներքոյ Ներքոյեանց.

Ի 12 Փետրվարի 1872 թ.

Ի Դորբատ։

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇՈՒԵՊԱՏԿԵՐ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՅՈՑ ԱՍՏՐԱԽԱՆԻ.

Ամբողջական Էջերը ամփոփում.

Հոգեբարձութիւն Աստրախանայ Հայոց երկսեռ Հոգևոր Դպրոցաց ընդ սմին առաքիչով ի Խմբագրատուն Արարատայ զՀամառօտ Հաշուէպատկեր մտից և ծախուց երկսեռ Դպրոցաց վասն 1871 անցելոյ ամի և զցուցակ թուոյ Ուսումնարանաց, Ուսուցչաց, ուսանողաց և վերակացուաց, խոնար-

հաբար խնդրէ հրատարակել տպագրութեամբ յԱմնագրիգ յընդհանուր տեղեկութիւն Հայկազն ժողովրդոց։

Հոգեբարձու

Ա-ռաջ Պրահ. Յովսէփ Ռոնէանցեանց
Սարգիս Ռոբէլեան
Սիմէոն Պողովեանց
Գրիգոր Սողոմոնեանց
Յովհաննէս Սարգսեանց

Ի 1 Փետրվարի 1872 ամի թ. 3.

Առարեան։

Համառօտ Հաշուեպատրիէր մտից և ծախուց երկոսեան Հոգեւոր Գլխոցայ Հայոց Ազգային Հաւաքեալ ի ծապուինեալ առմտէ 1871 ամի։

Մնացորդ ի 1870 ամի.

	ռ.	կ.
Մի 5% բիլէթ թագաւորական բանկի	1000	
Երկք 5% բիլէթք նոյն բանկի .	450	
Տասն Սերի բիլէթք, ...	500	
Պատրաստական դրամք . . .	463	81¼
	2 413 ռ.	81¼ կպ.

Մուտք 1871 ամի.

Գանձանակադրամք ժողովեալք յԵկեղեցիս Աստրախանայ	194	56½
Դրամք վաճառեալ գրեանց . .	67	70
Մասն տոկոսեաց դրամագլխոց եկեղեցեաց Աստրախանայ	1622	
Դրամք վաճառեալ ձեռագործեալ իրեղինաց ընդ ձեռն վիճակահան..	52	
Մասն եկամուտ արդեանց կրպակաց Թովմայի Յովհաննէսեան . .	200	
Մասն տոկոսեաց կտակաւանդ գումարի Բուրվարդեանց	350	
Նուիրադրամք զանազան անձանց յօգուտ Դպրոցաց	159	80
Տոկոսիք գրամագլխոց եղեալ Սեմինարիայի և Տպագրատան . .	515	
Տոկոսիք բիլէթաց գումարաց երկսեռ դպրոցաց	167	22
Տուրք թոշակատու երկսեռ աշակերտաց	164	
Նուիրադրամք բարերար Անդամոց Հայկազն կանանց	230	
Նուիրադրամք Գերապ. Սրբազան Առաջնորդի Թեմիս յօգուտ Օրիորդական դպրոցի	100	
Մի 5% բի էթ բանկի Նուիրեալ ի Կարապետէ Գայստեանց գումարաւ .	100	
Մի 6% բիլէթ վաճառականական բանկի գնեալ ի գումարաց դպրոցաց	1000	
Երկք 5% բիլէթ բանկի գումարաց ծխական երկսեռ դպրոցաց . . .	450	
Մի 5% բիլէթ բանկի գումարաց դպրոցաց, գումարաւ.	100	
Եօթն սերի բիլէթք, գնեալք ի գումարաց դպրոցաց	350	
Գումար մտից	8 236	9¾

Ծախ 1871 ամի.

	ռ.	կ.
Ի գին երկու զոյգ կօշկաց վասն աղքատ աշակերտաց	5	
Ի տարեկան վարձ կաղմարարի .	33	
Ի տարեկան վարձ ուսուցչաց և վերակացուաց դպրոցաց	1964	30
Ի տարեկան վարձ պահապանաց դպրոցաց	283	
Ի գին ուսումնական պիտոյից և այլ տնտեսական կառավարութեանց	520	47½
Ի տարեկան վարձ ժամագործի .	22	50
Ի Նպաստ շինութեան Ս. Գէորգեան դպրոցի	300	
Չորս 5% բիլէթք վասն փոխելոյ ի նոր՝ որք գրեալ են ի մուտս № 19 և 20	550	
Տասն սերի բիլէթք և պատրաստի դրամք վասն դարձուցանելոյ ի մի 6% բիլէթ, որ գրեալ է ի մուտս № 18.	1000	
Վարձադրամք վասն քառամեայ ջանակուռ աշխատութեանց ուսուցչի Տիրացու Մկրտչի Պոպովեանց . .	50	
Ի վերանորոգութիւն Օրիորդական Դպրոցի	202	37
Ի գին եօթն սերի բիլէթաց յօգուտ Դպրոցաց	350	
Ի վճար տոկոսեաց վասն վերոյիշեալ եօթն բիլէթաց	21	42
Գումար ծախուց	5302	6½

Առ մէկն Յունվարի 1872 ամի մնան բանկային բիլէթք երկու հազար հինգ հարիւր յիսուն ռուբլի, եօթն սերի բիլէթք երեք հարիւր յիսուն ռուբլի և պատրաստական դրամք երեսուն և չորս ռուբլի երեք և մի քառորդ կոպէկ. ընդ ամենն 2934 ռուբլի 3¼ կոպ. արծաթի։

ՆՈՐ – ՋՈՒՂԱՑ.

Խմբագրութիւն Արարատ Ամսագրոյ.

Հայկեան Հայրենասիրական Դպրոցս Ջուղայ ի հերուն հետէ այսր շարունակաբար արժանի եղև ընդունելոյ զՀերդ Պատուական Արարատ ամսագիր ի նուէր. որով արդարև աշակերտք Դպրոցիս ի հեռուստ աստի զընիկ Հայրենւոյ իւրեանց ճաշակեալ զճաշակն տեսական և բարոյական ազգի ազգի հոգեպարար արգասեաց գրականութեան, նաև զՀայաստանեայց Վանօրէից և զՔաղաքաց տեղագրութիւնս ի նմին ընթեռնլով, զնախանեացն մերոց զերջանիկ յուշ ածեն զփառս։

Ցոյր սակս և մեր ըստ բանականին թելադրութեան ի խնդիր ելեալ ճանաչել թէ յումմէ է շընորհն, շնորհ գերապայլ, որ զօրէն արփիական լուսոյ ծաւալեալ տեսանի այսօր զՀայաստանեօքս ի Նորին Նախագահ Ծառանդաւորէն Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ի Սրբազնագոյն Տ. Տ. Գէորգայ Դ. Վեհափառ Կաթուղիկոսէն ամենայն Հայոց. ահա Աստուածապարգև Հովուապետս այս հանգոյն թարգմանչացն մերոց՝ սրբոցն Սահակայ և Մեսրոպայ շուք եղեալ Հայկականս գրականութեան, ջան ի կիր արկանէ տալ բանալ զԴպրոցս ի Հայս առ ի բարոյական և մտաւորական կրթութիւնս ազգիս լրութեան։ Տինա՛ և մեք ամենախոնարհ որդիքս Նորին երանաշնորհ Հօրն Հասարակաց՝ խորին ակնածութեամբ ի դիմաց մերոյ Դպրոցիս մանկանց փութամբ մատուցանել զպտուղ շրթանցս, այն է զշնորհակալիս, իմասին պարգևի Արարատ ամսագրոյ, և յապայս միշտ ակնկալեալ ի վայելել զշնորհ Նորին Հայրապետական օրհնութեանցն։

Տեղի շնորհել գրուածոյս հայցեմք ի Պատուական խմբագրութենէդ յէջս Արարատ ամսագրոյ։

Պատիւ անձին համարիմք մնալ ամենախոնարհ ծառայք Ձեր

Մէ՛ոյէլ Գ. Աբգարեան
Կարապետ Աբգարեան
Կոչուեալք Հայկեան Հայրենասիրական Դպրոցի ի Նոր-Ջուղա
1871 Յունվար 25.

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ ԱԶԳ. ԵՒ ՀՈԳ. ԴՊՐՈՑԻ ՀԱՅՈՑ ԳԶԼԱՐԱՑ.

Խմբագրութիւն Արարատ Ամսագրոյ.

Հոգաբարձութիւնս առաքելով ընդ այսմ զՀաշուեցուցակ տնտեսական և ուսումնական մասանց Ղզլարայ ազգային Հոգևոր Դպրոցի, քաղեալ ի ժապաւինեալ մատենից, որ ընթերցաւ ի Հանդիսի տարեդարձի Նորին՝ առաջի ժողովրդեան՝ յելք

Յ–գիր Ս–ատ–ֆ–ատ–ա, Ս–ատ–ֆ–ատ–ա, Ս–ատ–ֆ–ատ–ա Լ–ուսաւորչաց – յամս Աստուածածնի, թուն 1871 ամի։

Դասարան	Թիւ Ուսումնարանաց	Թիւ Ուսուցչաց	Թիւ Վերակացուաց	Ուսանողք: Թոշակաւորաց	Ուսանողք: Զրիավարժից	Ուսանողք: Աղքատաց	Ընդ ամենն
Օրինական Հոգևոր արական Դպրոց, ի տարի սրբոյ Աստուածածնի Ամաց Եկեղեցւոյ	1	2	1	9	9	18	36
Օրինական Հոգ. արական Դպրոց, յանուն Ս. Գէորգայ Քաղաքարտեսի Զօրավարի ի տարի Ս. Կատարինէ կուսի Եկեղեցւոյ	1	2	1	2	6	26	34
Երկրորդ. Դաս. նախակրթական երկուց Դպ. զետեղեալ ի տան Հոգ. Դպ. որ ի տարի Ս. Աստուածածնին Մայր Եկեղեցւոյ.	,,	7	,,	6	,,	15	21
Հոգևոր Օրիորդական Դպրոց, զետեղեալ ի տան Գէորգեանցի Գրիգորի Կարապետեան Պարոն Պողոսեանց . . .	1	5	1	4	4	43	51
	3	16	3	21	19	102	142